ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

2016 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 14.00-ին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հարությունյանը, համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի, մանկապարտեզի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Համայնքի բնակիչները հայտնեցին, որ փողոցների ճանապարհների մի մասն արդեն շարքից դուրս է եկել և ցանկություն հայտնեցին փողոցները և ճանապարհները տեսնելու բարեկարգ, բարձրացրերցին բազմահարկ շենքների տանիքների վերանորոգման հարցը: Ցանկություն հայտնեցին տեսնելու մշակույթի տունը կառուցված կամ վերակառուցված, իսկ սպորտդահլիճը՝ ամբողջությամբ վերանորոգված և անհրաժեշտ մարզական տեխնիկայով հագեցած: Միջհամայնքային ճանապարհին տեղադրվի երթևեկության նշաններ, ինչի շնորհիվ կկանխվի անկանոն երթևեկությունը:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները, խոսեց հետագա ծրագերերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչներին հուզող հարցերին:

Նա հայտնեց, որ համայնքապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումն ու տանիքների վերանորոգումը:

Համայնքի ղեկավարն իր խոսքում նշեց, որ նկատում է հարկերի հավաքագրման մակարդակի բարելավում, ինչը նպաստում է գյուղապետարան-

համայնք փոխհամաձայնեցված աշխատանքի կազմակերպմանը: Նշված պայմանները հնարավորություն են ստեղծում նոր աշխատանքների կազմակերպման և իրագործման: Համայնքի ղեկավարն ավելացրեց, որ կապահովվի համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Առավելագույնս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Աշխատակազմի առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մուսալեռի համայնքապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 6 նիստ: Արձակել է 60 կարգադրություն, ընդունել 12 որոշում: Տրվել է 593 տեղեկանք: Ելից գրությունների թիվը՝ 130, մտից գրությունների թիվը՝ 165:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել է գույքահարկի՝ շինությունների 854 300 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 1 700 000 դրամ/, փոխադրամիջոցների 2 166 100 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 3 100 000 դրամ/, հողի հարկի՝ 1 173 200 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը՝ 3 000 000 դրամ/, տեղական տուրքերի՝ 63 500 դրամ /1-ին կիսամյակի 100 000 դրամ/, վարձակալական հողերի վճարների՝ 105 400 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը

90 000 դրամ/, այլ եկամուտների՝ 198 000 դրամ, /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը՝ 207 600 դրամ/ գանձումը:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն՝ 2 155 000 դրամ:

Համայնքապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

Պաշտպանության բնագավառում

Լրացվում է Մուսալեռի գյուղական համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը:

2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում զորացրվել է թվով 7 զինվոր: Նախատեսված է զորացրվածներին տրամադրել դրամական պարգև՝ յուրաքանչյուրին 20 000 դրամ:

Հոգացել է «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ում սովորող զորակոչիկների երթևեկության ծախսերը:

Դրամական աջակցություն է ցուցաբերել 2016 թվականի ապրիլ-մայիս ամսիների ընթացքում սահմանային լարվածության ժամանակ մասնակցություն ցուցաբերած համայնքի բնակիչներին, վերջիններիս տրվել է նաև գույքահարկի և հողի հարկի արտոնություններ:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է իրականացվել համայնքի հողային ֆոնդի նպատակային օգտագործման համար:

Համայնքի քարտեզի որոշակի հատվածի ուղղման նպատակով կատարվել են չափագրման աշխատանքներ:

Կազմվել է հողային հաշվեկշիռ:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

1. Համայնքի Անի թաղամասում կառուցվել է կոյուղագծի նոր դիտահոր: Նույն թաղամասում կատարվել են առկա կոյուղագծերի մաքրման աշխատանքներ:

2. Գ. Լուսավորիչ, Նարեկացի, Տ. Անդրեասյան, Հ. Տերտերյան, Տ. Թովմասյան, Չարենց, Արգիշտի, Պ. Սևակ, Մ. Սարգսյան փողոցներում, Հ. Աթաբեկյան թաղամասում կատարվել են ավազ-խճաքարով հարդարման աշխատանքներ: Կատարվել են Գ. Լուսավորիչ, Նարեկացի, Հ. Թումանյան, Արցախ փողոցների, Մուսալեռի գերեզմանատան ճանապարհների փոսային հատվածների հարդարման աշխատանքներ:
3. Վերանորոգվել է համայնքի Պ. Սևակ և Զ. Անդրանիկ փողոցներն իրար կապող կամրջակը:
4. Համայնքի Դվին և Աթաբեկյան թաղամասերում անցկացվել է լուսավորություն:
5. Կատարվել է Ե. Չարենց, Մ. Մաշտոց, Պ. Սևակ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոցների և Անի թաղամասի փողոցային լուսավորության ընթացիկ վերանորոգում:
6. Ուժգին քամու հետևանքով բնակիչների կրած վնասը փոխհատուցվել է ազբեստե շիֆերի և եզրահան տախտակների տրամադրման միջոցով:

Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման բնագավառում

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություն:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Պարբերաբար տարվում են ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման, բարեկարգման և պահպանման աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ կապված

աշխատանքների բնագավառում

Մայրության և գեղեցկության տոնի առթիվ Ֆրանց Վերֆելի անվան դպրոցի, մանկապարտեզի, փոստային բաժանմունքի, բուժամբուլատորիայի, գյուղապետարանի կին աշխատակիցներին, ինչպես նաև զինվորների մայրերին տրվել են ծաղկեփնջեր:

Կատարվել է «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ում սովորող թվով 1 զորակոչիկի երթևեկության ծախսերը:

Մայիսյան եռատոնի կապակցությամբ դրամական պարգևատրում է ստացել Հայրենական պատերազմի թվով 1 մասնակից, Ղարաբաղյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների թվով 4 ընտանիքների տրվել է դրամական օգնություն: Տոնի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում:

2016 թվականի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտների ավարտական երեկոյի կազմակերպմանն աջակցելու նպատակով տրամադրվել է 100 000 դրամ:

Կազմակերպվել է համայնքի մասնակցությունը «Ուդուլի» տոլմայի հայկական փառատոնին:

Մանկապարտեզում պարբերաբար կատարվում է դեռատիզացման, դիզինֆեկցման աշխատանքներ:

Վերանորոգվել են համայնքի խաղահրապարակի ճոճանակները:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում

Նպաստել է ինքնակամ հողազավթման կանխմանը: Համայնքում կատարվել են կանաչապատման, աղբի մաքրման և տեղափոխման աշխատանքներ:

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի կարգավորման համար վերանորոգվել է համայնքի տրակտորը:

Առկա հիմնախնդիրները

1. Համայնքը զուրկ է սպորտային և մշակութային օջախներից, համայնքում կա միայն մի՝ դպրոցական գրադարան, ինչը հանգեցնում է երիտասարդությանը նշված ոլորտներից հեռանալուն և դրանից բխող կրթական, դաստիարակչական խնդիրների առաջացմանը:
2. Համայքնում գործող միակ հանգստի գոտին տեղակայման և փոքր մասշտաբի պատճառով հասանելի չէ շատերին:
3. Գյուղում առկա միջհամայնքային ճանապարհը զուրկ է երթևեկության նշաններից, անվտանգ երթևեկություն ապահովելու համար անհրաժեշտ է դրանց տեղադրումը:
4. Համայնքի մի շարք փողոցներ կարիք ունեն բարեկարգման, ասֆալտապատման:
5. Բազմաբնակարան շենքերի տանիքները կարիք ունեն վերանորոգման:

Մուսալեռ համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան
13.07.2016թ.